Ընկերություն՝ AMX | Armenia Securities Exchange
Հաստիք՝ Բիզնես ադմինիստրատոր «AMPIS» համակարգի գծով/ Business administrator for “AMPIS” system

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

AMX ընկերությունը փնտրում է Բիզնես ադմինիստրատոր, ով կմիանա մեր կենսաթոշակային ծառայությունների դեպարտամենտի թիմին և պատասխանատու կլինի «ԱՄՊԻՍ» համակարգի սպասարկման, նոր մոդուլների մշակման, բիզնես գործընթացների ավտոմատացման համար և կստեղծի նոր ծրագրային լուծումներ, որոնք ուղղված կլինեն կենսաթոշակային համակարգի բարելավմանը և զարգացմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենսաթոշակային համակարգի ծրագրային լուծումների բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում, նոր մոդուլների մշակում, թեստավորում և նոր տարբերակների տեղադրում,
- Բիզնես գործընթացների ավտոմատացման աշխատանքների իրականացում,
- Ֆոնդի ակտիվների պահպանման, հաշվառման, դրանց նկատմամբ հսկողության իրականացման, զուտ ակտիվների հաշվառման համար ծրագրային լուծումների մշակում, թեստավորում և սպասարկում,
- Հաշվի օպարատորների աշխատակիցների համար ատեստավորման համակարգի մշակում,
- «ԱՄՊԻՍ» համակարգի սպասարկման ապահովում, նոր մոդուլների մշակում,
- Ծրագրային համակարգերում հաշվետվությունների ներբեռնման, տվյալների փոխանակման կամ արտացոլման նպատակով ավտոմատացումների մշակում և իրականացում,
- Ռեեստրավարման և պահառության ծառայությունների մատուցման շրջանակներում ծրագրային լուծումների ընթացիկ սպասարկման ապահովում,
- Ֆոնդի կառավարիչներից ստացված հանձնարարականների և գործարքի հետ կապված փաստաթղթերի ստուգման և ուսումնասիրությունների իրականացում, դրանից բխող

գործառնությունների հաստատում,

- «ԱՄՊԻՍ» համակարգում պարամետրերի և տվյալների գրանցում և վերանայում, օգտագործողների գրանցմանը, իրավասությունների տրամադրմանը, համակարգում գործառնությունների կատարմանն օժանդակում,
- Ֆոնդի ակտիվներով գործառնությունների կատարմանն օժանդակում, գործարքների հետ կապված փաստաթղթերի ուսումնասիրում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- Մագիստրոսի կոչում կամ համարժեք որակավորում ֆինանսների կամ տնտեսագիտության ոլորտում,
- Առնվազն 2 տարվա փորձ ֆինանսական ոլորտում,
- Արժեթղթերի շուկայի մասին գիտելիքների առկայություն,
- Տեխնիկական առաջադրանք կազմելու ունակություն, նմանատիպ աշխատանքային փորձի առկայություն,
- Կենսաթոշակային համակարգի և ֆոնդի կառավարիչների գործունեության մասին պատկերացում,
- ՀԾ բանկ համակարգի լավ իմացություն,
- «ԱՄՊԻՍ» ծրագրի իմացությունն առավելություն է,
- Համակարգչային գիտելիքներ և ՏՏ ենթակառուցվածքի լավ իմացություն,
- Սթրեսային իրավիճակում արագ կողմնորոշվելու և սեղմ ժամկետներում խնդիրներին լուծում տալու ունակություն,
- Թիմում աշխատելու ունակություն,
- Անգլերենի գերազանց և ռուսերենի լավ իմացություն:

Աշխատավարձը՝ մրցակցային

Տրամադրվող արտոնություններ՝

- Բժշկական ապահովագրություն,
- Տարեկան բոնուս և աշխատավարձի վերանայում,
- Սպորտային փաթեթ,

- Ներքին և արտաքին դասընթացներ,
- Տարատեսակ զեղչեր,
- Հաճելի գրասենյակային միջավայր,
- Թիմբիլդինգային և կորպորատիվ միջոցառումներ,
- Անընդհատ զարգացող և մոտիվացնող թիմ,
- Թեյ, սուրճ, ժպիտներ ☺

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց ռեզյումեն (CV) հետևյալ էլ. հասցեին՝ **careers@amx.am**, նամակի վերնագրի հատվածում նշելով «**Բիզնես ադմինիստրատոր «AMPIS» համակարգի գծով**»:

Վերջնաժամկետ՝ «31» Հոկտեմբեր

Ընկերության մասին՝

Հայաստանի ֆոնդային բորսան գործող միակ ֆոնդային բորսան է, որի կազմում է նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան: Միասին մենք արդեն 18 տարի աջակցում ենք ներդրողներին ներգրավել կապիտալ:

Մեր նպատակն է սատարել բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանը և գրավել հայաստանյան ու միջազգային ներդրողների՝ առաջարկելով արդյունավետ լուծումներ ու ծառայություններ, այդ թվում՝ առևտրի, քլիրինգի, վերջնահաշվարկի և կենսաթոշակային համակարգի կառավարման ոլորտում:

Գտնվելու վայրը՝ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ,

Վեբ կայքեր՝ amx.am, cda.am,

Facebook https://www.facebook.com/AMXArmenia/,

Linkedin https://www.linkedin.com/company/amxarmeniaexchange/